

**ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԼԾԱԿ**

Ա.Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ի.Շ.ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Ինչպես հայտնի է պետությունը մեծ դեր է կատարում տնտեսության զարգացման և կարգավորման գործում: Պետությունը կարգավորում է ձեռնարկությունների աշխատանքը, հարկում է քաղաքացիներին և հավաքադրած միջոցները տրամադրում սոցիալական միջոցառումների ֆինանսավորմանն ու երկրի տնտեսական աճին նպաստելու համար: Պետական կարգավորումը անհրաժեշտ է մի շարք նկատառումներով առաջին հերթին պետությունը տնտեսավարող սուբյեկտների համար, անկախ նրանց սեփականություն ձևից, պետք է ստեղծի օրենսդրական դաշտ, օրենսդրորեն ձևակերպի բիզնեսի իրավակազմակերպման ձևերը, մշակի հարկային և մաքսային օրենսդրք, առանց որոնց ոչ մի տնտեսավարող սուբյեկտ չի կարող գործել լիակատար արդյունավետությամբ: Իսկ այդ օրենքները կարող են ընդունել միայն պետության օրենսդիր մարմինները, և դրանով իսկ արդեն պետությունը միջամտում է տնտեսության զարգացմանը: Տնտեսությունը կարող է զարգանալ հիմնականում երեք եղանակով՝

Առաջինը սեփականության բազմաձևության (պետական, մասնավոր և կոլեկտիվ) հիմքի վրա ազատ զարգացող շուկայական տնտեսությունն է: Այստեղ հիմնական կարգավորիչը տնտեսական մրցակցությունն է, ավելի շատ արտադրանք թողարկելու և իրացնելու, դրա շնորհիվ առավելագույն շահույթ ստանալու ձգտումը: Այս դեպքում ազատ գործում են տնտեսական օրենքները, և տեղի է ունենում տնտեսական զարգացման ինքնակարգավորում:

Երկրորդը կենտրոնացված, պլանային կամ ինչպես հիմա անվանում են՝ վարչահրամայական տնտեսությունն է: Այս դեպքում արտադրության միջոցները կենտրոնացվում են մի սեփականատիրոջ՝ պետության ձեռքում: Բոլոր ձեռնարկությունների և ճյուղերի համար պետությունն է օահմանում առաջադրանքներ, որոնց կատարումը պարտադիր է:

Երրորդ, տնտեսության մակրոտնտեսական կարգավորման գործում բավականի մեծ է տնտեսական լծակների դերը, դրանք են՝ 1. հարկային դրույքաչափերը, 2. բանկային վարկի տոկոսադրույքը, 3. փողի քանակը շրջանառության մեջ, 4. պետական բյուջեի եկամուտներն ու ծախսերը, 5. որոշ ապրանքների գների և ծառայությունների սակագների հաստատումը, ինչպես նաև դրանց անուղղակի կարգավորումը՝ շահութաբերության ձևահամայնի մակարդակի որոշմամբ, 6. պետական պատվերները և այլն:

Յուրաքանչյուր պետություն առաջին հերթին մաահոգավում է իր քնակչության կենսամակարդակի բարձրացման և անվտանգության ապահովման խնդիրներով: Իսկ դրա համար պետությունը անհրաժեշտ են մեծ քանակությամբ դրամական միջոցներ, որոնք նա հավաքադրում է հարկային համակարգի միջոցով և կենտրոնացնում պետական բյուջեում: Հարկերը ոչ միայն պետության եկամուտների գոյացման աղբյուր են, այլև նպաստում են արտադրության զարգացմանը: Եթե հարկերի դրույքաչափերը բարձր են, ապա այդ դեպքում կարգելակվի արտադրության զարգացումը: Ուստի պետք է

Հարկերը սահմանվեն այնպիսի մակարդակով, որ դրանք ոչ միայն ապահովեն բյուջեի եկամուտները, այլև խթանեն արտադրության զարգացումը:

Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով պարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձից, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում: Այն առաջացել է դասակարգերի և պետության ծախսերի հետ: ՀՀ-ում գործում է միասնական հարկային համակարգ: Հարկ վճարողների հաշվառման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը, իսկ հարկ վճարողների հաշվառման իրականացում է հարկային տեսչությունը:

1992թ. հարկային համակարգը ՀՀ-ում նախորդ տարիների համեմատությամբ էական փոփոխություններ կրեց: Հարկային քաղաքականությունում նշանակալի բարեփոխումները պայմանավորված էին տնտեսության մեծ ծավալող նոր հարաբերություններով: Առաջին բարեփոխումները կատարվեցին Ռուսաստանի հարկային քաղաքականության ազդեցության ներքո:

Ներկայումս ՀՀ-ում կիրառվում են հարկերի հետևյալ վեց տեսակները. չորս ուղղակի՝ շահութահարկ, եկամտահարկ, գույքահարկ և հողի հարկ, երկու անուղղակի՝ ավելացած արժեքի հարկ և ակցիզային հարկ:

Պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկերն են, որոնց բաժին է ընկնում ամբողջ մուտքերի 90 %-ը: ՀՀ հարկային տեսչության կողմից հաշվեգրված պետական եկամուտները 1998թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 68786.5 միլիոն դրամ, որը 14.8 %-ով ավելի է 1997թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ձևավորված նույն ցուցանիշից:

Հարկային եկամուտների կառուցվածքը բնութագրվում է աղյուսակում:

Հաշվային եկամուտների կառուցվածքը (%-ներով)

Աղյուսակ*

Հարկերի եկամուտները	1997թ.		1998թ.	
ընդամենը այգ թվում	1-10 ամիս	1-11 ամիս	1-12 ամիս	
ավելացած արժեքի հարկ	41.3	39.3	39.7	38.1
շահութահարկ	22.6	22	21.8	21.5
ակցիզային հարկ	3.9	3.7	3.4	4.3
եկամտահարկ	18.9	18.2	18.3	19.3
գույքահարկ	1.2	1.1	1.1	1.2
հողի հարկ	2.8	2.8	2.9	3.0

Բերված տվյալները վկայում են, որ 1998թ. հունվարի 1-ի դրությամբ հարկային եկամուտների հիմնական մասը ձևավորվել է ավելացած արժեքի հարկի (38.1%), շահութահարկի (21.5%) և ակցիզային հարկի (4.3%) մուտքերի հաշվին, որոնց ընդհանուր ծավալը հարկային եկամուտներում կազմել է 83.2%: 1998թ. հունվարի 1-ի համեմատությամբ նկատվել է հետևյալ հարկատեսակների մուտքերի տեսակարար կշռի նվազում՝ ավելացած արժեքի

* Աղյուսակի տվյալների աղբյուրը ՀՀ վիճակագրության վերլուծության և պետական ռեզիստրի 1998թ. տեղեկագիրն է:

Հարկը (1.6%), շահութահարկը (0.3%), իսկ ակցիզային Հարկի գծով մուտքերը ավելացել են 0.9 %-ով, եկամտահարկինը՝ 1%-ով, գույքահարկինը՝ 0.1%-ով: Այսինքն՝ ՀՀ-ում անուղղակի Հարկերի մուտքերը գերազանցում են ուղղակի Հարկերի մուտքերին, որը բացասական երևույթ է և լրջորեն մտածելու տեղիք է տալիս ՀՀ-ում տարվող տնտեսական քաղաքականության վերաբերյալ: Առհասարակ բյուջեի բոլոր եկամուտների մեջ պետք է գերակշռեն ուղղակի Հարկերից ստացած մուտքերը:

Հարկերը կատարում են երկու կարևոր ֆունկցիաներ՝ ֆիսկալ (կարգավորող) և խթանիչ: Ֆիսկալ ֆունկցիան բյուջեն եկամուտներով ապահովելն է, խթանիչը կոչված է ապահովելու գործարարության, բիզնեսի զարգացումը: Հարկային քաղաքականությունը պետք է լինի այնպիսին, որ ապահովի երկու ֆունկցիաները միասին: Ձի կարելի ուղադրությունը բևեռել մեկի կամ մյուսի վրա: Եթե ավելի շատ կարևորվի ֆիսկալ կողմը, ապա դա կհանգեցնի տնտեսական անկման, եթե սոսկ կարևորվի գործարարության խթանումը, ապա դա կհանգեցնի եկամուտների նվազեցմանը: Այս իմաստով Հարկային Համակարգի դժվարագույն, բայց միևնույն ժամանակ բարդ և կարևոր խնդիրը այդ երկու ֆունկցիաների զուգակցված ապահովումն է: Դրա համար Հարկային Համակարգի կարգավորման քաղաքականությունը մեր պետության լուրջ հարցերից մեկն է, քանի որ այն խրախուսում է այս կամ այն ճյուղի մրցակցությունը, կապիտալի կուտակումը՝ դրանց համար համեմատաբար բարենպաստ պայմաններ ստեղծելով: ՀՀ-ում չեղտը դրվել է առավելապես Հարկերի ֆիսկալային դերի վրա, իսկ որպես պետության տնտեսական ազդեցության լծակ՝ Հարկային Համակարգը թույլ է օգտագործվում: Սա ևս գործող Համակարգի թերություններից մեկն է: Հաշվի առնելով Հարկերի միջոցով կառուցվածքային փոփոխությունները և ինվեստիցիաները խթանելու բացառիկ կարևորությունը՝ կարծում ենք՝ Հարկային քաղաքականությունը ՀՀ-ում դեռևս կարիք ունի կատարելագործման:

Հարկային քաղաքականությունը իրականացնելու համար, բացի գործող Հարկային տեսակներից, կարևորվում են նաև կիրառվող Հարկերի դրույքաչափերը և նրանց ներգործությունը ընդհանուր տնտեսության վրա: Դրույքաչափերը լինում են պրոգրեսիվ, ռեգրեսիվ, համամասնական և հաստատուն: Պրոգրեսիվ Հարկային դրույքները բարձրանում են, ռեգրեսիվները՝ իջնում են կամ մնում կամ գույքի արժեքի ավելացմանը համապատասխան: Ռեգրեսիվ Հարկային դրույքը կիրառվում է հիմնականում զարգացած երկրներում և նպատակ ունի որոշակի առավելություն ստեղծել խոշոր ֆիրմաների և կորպորացիաների համար: Իսկ մեր երկրում Հարկերը գանձվում են պրոգրեսիվ աճող դրույքներով:

Սեկ դար առաջ տնտեսագետները կարծում էին, թե Հարկային եկամտի կայունությունը դրական երևույթ է, և Հարկերն անկախ պետք է լինեն գործարարության պայմաններից: Մակրոտնտեսագիտական առումով իրատեսական է հակառակը: Ծիշտ օգտագործելով Հարկային Համակարգի ճկունությունը՝ կարելի է հասնել տնտեսության կայունացմանը և գործարարության պարբերաշրջանների չափավորմանը: Փոփոխվող Հարկադրույքները կարող են օգտագործվել տնտեսությունը խթանելու կամ խոչընդոտելու համար:

Հարկերի վրա գնաճի ազդեցությունը ներուժային տեսակետից ավելի նշանակալի է: Երբ մարդիկ իրենց անվանական եկամուտների աճին զուգընթաց ավելի բարձր Հարկեր են վճարում, գնաճն ինքնին մեծացնում է Հարկերի չափը: Այսպիսով, դա կառավարությունը հնարավորություն է ընձեռում Հարկերը

մեծացնել առանց Համապատասխան օրենքի, որպեսզի կանխվի զնաճով պայմանավորված Հարկերի աճը:

Հարկադրույքներն ազդում են ապրանքների Հարաբերական գների վրա և դրանով իսկ ազդում աշխատանքի և Հիմնական միջոցների առաջարկի վրա: Իջեցնելով Հարկադրույքները՝ կարելի է մեծացնել խնայողությունը, ներդրումը և տնտեսական աճը: Բարձր դրույքներն իրականում կարող են փոքրացնել Հարկային եկամուտները, դրանք խարխուլում են Հարկային Համակարգի Հիմքը, քանի որ Հանգեցնում են տնտեսական գործունեության մակարդակի իջեցման, արգելակում գիտատեխնիկական առաջադիմությունը, դանդաղեցնում տնտեսական աճը, որը վերջին Հաշվով բացասաբար է անդրադառնում պետական բյուջեի մուտքերի վրա:

Հեռանկարում բարձր Հարկերի, Հարկադրույքների իջեցումը կապահովի խնայողության, ներդրումների, զբաղվածության և Հետևաբար, ամբողջական եկամուտների չափերի մեծացում, որոնք ենթակա են Հարկման:

Այդպիսով, Հարկային Համակարգը Հսկայական ազդեցություն է թողնում պետության, ինչպես նաև ամբողջ տնտեսության վրա: Մակրոմակարդակով այն պետության կարգավորիչ Հզոր լծակներից մեկն է, որը սերտորեն կապված է մյուսների հետ: Տնտեսապես ակտիվ պետությունը պետք է ունենա ճկուն Հարկային Համակարգ, որպեսզի կարողանա իրականացնել արդյունավետ և նպատակահարմար գործունեություն:

НАЛОГОВАЯ СИСТЕМА КАК РЫЧАГ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ЭКОНОМИКИ

А.А.КАРАПЕТЯН, И.Ш.ШАХВЕРДЯН

Резюме

Как известно, государство играет важную роль в развитии экономики. В целях содействия экономическому росту государство использует налоговую политику, которая является мощным рычагом в деле регулирования экономики.

Денежные средства, необходимые для повышения жизненного уровня населения, государство пополняет с помощью налогов, которые в дальнейшем централизуются в гос. бюджете.

В Республике Армения действующие налоги следующие.

1. Подоходный налог.
2. Налог от прибыли.
3. Налог от добавочной стоимости.
4. Налог от акциза.
5. Земельный налог.
6. Налог на имущество.

Иметь экономически активное государство — значит иметь налоговую систему, осуществляющую все возложенные на нее функции.